« ՀՀ Սյունիքի մարզի
Alvank secondary school
Syuniq region of RA” SNPO

Ալվանքի միջնակարգ դպրոց” ՊՈԱԿ
“Алванкская средняя школа
Сюникской области РА” ГНО

„Ալվանքի միջնակարգ դպրոց՛՛ ՊՈԱԿ, ՀՀ Սյունիքի մարզ,Մեղրի համայնք,

գյ. Ալվանք, փողոց 3 շ.16, 3404,հեռ. 028695206, 091314449, alvanq@schools.am

,, 20” օգոստոսի 2024թ.

N 96

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար
պրն. Է. Մարտիրոսյանին

Հայտնում եմ Ձեզ, որ <<Ալվանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում առաջացել են ֆիզիկայի (14 դասաժամ), մաթեմատիկայի (4 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ), երգի (5 դասաժամ), ինֆորմատիկայի (10 դասաժամ), կերպարվեստի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղեր, որի համար սահմանված կարգով հայտարարվել է մրցույթ: :

Մրցույթն անցկացվելու է <<Ալվանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 05.09.2024թ. ժամը 14:00-ին:

Առդիր՝ հայտարարությունը:

Դպրոցի տնօրեն Վ. Սևումյան

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ալվանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (14 դասաժամ), մաթեմատիկայի (4 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ), երգի (5 դասաժամ), ինֆորմատիկայի (10 դասաժամ), կերպարվեստի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
• դիմում (ՁԼ1), մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
• բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ)՝
• անձը հաստատող փաստաթուղթ
• «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
• ինքնակենսագրություն (ՁԼ 5),
• այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
• ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
• հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
• Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք;
Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 5-ին ժամը՝14:00- ին, Սյունիքի մարզի Ալվանքի միջնակարգ դպրոցում(Սյունիքի մարզ, Մեղրի համայնք գյուղ Ալվանք փողոց 3 շենք 16)
Տեղեկությունների համար՝ զանգահարել՝ 091 314 449 հեռախոսահամարով: